

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան»
Հիմնադրամի 2018թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի Հիմնադրամ
2. Հիմնադրամը գրանցված է ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի
կողմից

Գրանցման համարը՝ 44316012377

Վկայականի համար 02 Ա N003603

Գրանցման ամսաթիվը՝ 26.01.2016թ.

3. Գտնվելու վայրը՝ ք. Շուշի, Աշոտ Բեկոբի 4, հեռ. 047731022, Բջջ. 097299294, Կայք shushitech.am
, Էլ. Փոստ info@shushitech.am

4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝

Ռեկտոր Հովհաննես Վաչեի Թոքմաջյան, 2018թի հաշվարկած աշխատավարձը 10,141,600 ՀՀ
դրամ

5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝

Արայիկ Վլադիմիրի Հարությունյան

Մլավիկ Արմիկի Ասրյան

Արամ Սերգեյի Մխչյան

Կարեն Ալեքսանդրի Շահրամանյան

Արտակ Արտյունի Բեգլարյան

Արմեն Յուրիկի Սարգսյան

Կարեն Արմոյի Ներսիսյան

Գագիկ Միքայելի Բաղունց

Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյան

Վասպուրակ Սմբատի Կարապետյան

Սեյրան Ալեքսանդրի Շահնազարյան

Սարիբեկ Բարդուղի Գալստյան

Նվեր Ալբերտի Միքայելյան

Գևորգ Գագիկի Վերանյան

Ռոբերտ Միսակի Հարությունյան

Լևոն Գագիկի Գրիգորյան

Արտակ Արթուրի Սարգսյան

Սամվել Ռաֆայելի Մինասյան

Գրիշա Ստեփանի Նարինյան

Զորի Զարքյազի Մուսայելյան

Հոգաբարձուների խորհրդի 9 անդամների համար 2018թ ընթացքում հաշվարկվել և
վճարվել է աշխատավարձ՝ ընդամենը 32,557,100 դրամ

6. Աշխատակազմը՝ 284 հոգի, աշխատավարձի ֆոնդը 601,075,829 դրամ

7. Իրականացված ծրագրերը՝

7.1 Կրթական ծրագիր (միջին մասնագիտական, բուհական և հետբուհական)

7.2 Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և տեխնիկական հսկողություն,

7.2 Գյուղատնտեսական մթերքների մշակում և արտադրություն,

7.3 Բարեգործական նպատակներով սեփական արտադրանքի և գյուղ մթերքի նվիրատվություն

7.4 Գյուտերի արտոնագրում:

7.5 Էլեկտրաախտորոշիչ նոր սարքի գրանցում և արտոնագրի ստացում

8.Ֆինանսավորման աղբյուրները՝ ԱՀ պետական բյուջե 628,657,913 դրամ, վճարովի ուսուցում-176,532,075 դրամ, գյուղատնտեսական մթերքի իրացումից -1,883,829 դրամ, սեփական արտադրանքի իրացումից - 3,384,224 դրամ, եկամուտ դիպլոմների տրամադրումից- 1,160,583 դրամ, հասույթ առարկայական տարբերություններից, ընդունելիությունից, ակադեմիական տեղեկանքներից - 1,909,617 դրամ, անհատույց ստացած եկամուտներ-800,000 դրամ, այլ մուտքեր 71,601,186դրամ:

9.Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝

942,332,065 դրամ

Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ընդհանուր չափը՝ 942,332,065 դրամ

10.Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի

(աուդիտորի) եզրակացությունը – առդիր.

Ռեկտոր՝

Հ.Վ. Թորմաջյան

Գլխավոր հաշվապահ

Ա.Ա.Ծատուրյան



21 մարտի 2019թ

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գրնվող անձանց պատասխանատվությունը:

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախաազժում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:

- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

21 մարտի 2019թ.

«ԱՌՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ



Արսեն Խաչատրյան
Տնօրեն



Անուշ Մարտիրոսյան
Աուդիտոր